ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ *

ՀՏԴ 327 *DOI: 10.52063/25792652-2024.1.20-72*

ՎԱՐԴՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
դիվանագիտական ծառայության և
մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
v_petrosyan@ysu.am
ORCID: 0009-0007-4308-301X

Հոդվածի նպատակն է վեր հանել դիվանագիտական այն մեթոդները, որոնց իմացությունը և կիրառումը կարող են մեծապես նպաստել երկրների միջև հարաբերությունների բարելավմանը, առանձին դեպքերում նաև՝ երկրների միջև գոյություն ունեցող լարվածության թուլացմանը: Հոդվածում արծարծվում են այն խնդիրները, որոնք դրված են դիվանագետների առջև՝ այդ նպատակին հասնելու համար, այն է՝ գտնել ուղիներ՝ երկրների միջև մշտական երկխոսություն ապահովելու և համագործակցությունը խթանելու համար:

Դիվանագետի համար հատկապես կարևոր է միջմշակութային առանձնահատկությունների իմացությունը, որը հնարավորություն է տալիս խուսափելու ոչ նրբանկատ կամ վիրավորական արտահայտություններից կամ գործողություններից և, դրանց հմուտ կիրառության դեպքում, դրանք օգտագործել ի շահ բանակցությունների:

Բանակցությունների հաջողությունը պայմանավորված է նաև դիվանագետի անձնային որակներով՝ անձնական գրավչություն, վայելուչ արտաքին և պահվածք, իր կողմից բանակցվող հարցի լիարժեք տիրապետում, մասնագիտական խոր գիտելիքներ համաշխարհային քաղաքակրթության և ժամանակակից աշխարհաքաղաքականության թեմաների, միջմշակութային հաղորդակցման առանձնահատկությունների և այլ հարցերի վերաբերյալ:

Թեմայի վերլուծության համար կիրառվել են երկկողմ և բազմակողմ դիվանագիտության արդի միտումների քննադատական վերլուծության, ինչպես նաև համաժամանակյա և տարաժամանակյա ուսումնասիրության մեթոդները:

Հոդվածի հիմնական եզրահանգումն այն է, որ մասնագիտական գործունեության և բանակցությունների ժամանակ հաջողության հասնելու համար դիվանագետը պետք է զուգակցի վերը նշված մասնագիտական հմտություններն ու անձնական կարևոր որակները, ինչպես նաև կարողանա լավագույնս ներկայացնել իր երկիրը թե՛ մասնավոր, թե՛ հանրային հադիպումների ժամանակ:

* Հոդվածը ներկայացվել է 11.02.2024թ., գրախոսվել՝ 01.04.2024թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2024թ.:

Հիմնաբառեր՝ *լարվածության թուլացում, հումոր և ինքնահեգնանք, ստորտային դիվանագիտություն, մշակութային դիվանագիտություն, խոհանոցային դիվանագիտություն, արարողակարգ և վարվեցողություն, արարողակարգային նվերների փոխանակում:*

Ներածություն

Դիվանագիտությունը իրավամբ դասվում է շատ լուրջ և պատասխանատու մասնագիտությունների կարգում: Սակայն այլ մասնագիտությունների նման այս մասնագիտությունը նույնպես ունի իր զվարճալի և հետաքրքրաշարժ կողմերը, որոնք կփորձենք ներկայացնել սույն հոդվածի շրջանակում:

Դիվանագիտության հաճելի կամ զվարճալի կողմն ապահովելը դիվանագետների կողմից ինքնանպատակ չէ, այն միտված է մի կողմից **թուլացնելու** երկրների միջև գոյություն ունեցող **լարվածությունը**, մյուս կողմից՝ ստեղծելու **հաճելի և բարենպաստ մթնոլորտ** բանակցությունների համար:

Այդպիսի մթնոլորտ ապահովելու համար կան մի շարք մեթոդներ՝

1. Ինքնատիպ կամ ստեղծագործական մոտեցում արարողակարգային որոշ գործողությունների, ինչպիսիք են ողջունելը, նվերներ փոխանակելը և այլն:
2. Հումորի և ինքնահեգնանքի կիրառումը դիվանագիտական ելույթների կամ հանդիպումների ժամանակ:
3. Սոցցանցերի և տեսանյութերի օգտագործումը:
4. Սպորտային, մշակութային, խոհանոցային դիվանագիտության օգտագործումը և այլն:

Փորձենք անդրադառնալ նշված մեթոդներին ավելի հանգամանորեն:

Դիվանագիտական շփումներում շատ կարևոր է արարողակարգային վարվեցողության կարոններին հետևելը՝ **սկսած ողջունելուց մինչև հրաժեշտ տալը:** Ձեռքսեղմումը, օրինակ, դիվանագիտության մեջ կարևոր ժեստ է, որն օգտագործվում է ողջունելու կամ հարգանք ցուցաբերելու համար: Ձեռքսեղմմամբ է ուղեկցվում նաև պայմանագիր կնքելը կամ որոշակի պայմանավորվածություն ձեռք բերելը: Երբեմն այն կարող է նպաստել երկու երկրների միջև լարվածության թուլացմանը, դիվանագիտական հարաբերությունների նոր մեկնարկին: Հայտնի օրինակ է 1972 թ. ԱՄՆ նախագահ Ռիչարդ Նիքսոնի և Չինաստանի առաջնորդ Մաո Ցզեդունի ձեռքսեղմումը, որը նշանավորեց ԱՄՆ-ի և Չինաստանի մերձեցման սկիզբը:

Հաճախ դիվանագետներն ինքնատիպ կամ ստեղծագործական մոտեցում են դրևորում արարողակարգային գործողությունների նկատմամբ: Հիշենք, թե ինչպես էին դիվանագետները բարևում քովիդի ժամանակ: Ձեռքսեղմումից խուսափելու համար հաճախ ողջունում էին արմունկներն իրար կպցնելով, երբեմն՝ ոչ շատ պաշտոնական հանդիպումների ժամանակ, նույնիսկ ոտնաթաթերն իրար կպցնելով:

Սակայն ինքնատիպ մոտեցումը չպետք է հանգեցնի արարողակարգի կանոնների անտեսմանը: Շատ դիվանագետներ և երկրների ղեկավարներ հաճախ քննադատության են ենթարկվել այդ կարոնները խախտելու համար: Օրինակ՝ թագավորական ընտանիքի հետ շփման հատուկ արարողակարգի չիմացության կամ անտեսման պաճառով շատ երկրների առաջնորդներ հաճախ քննադատության են ենթարկվել: Ավանդաբար, բրիտանական արարողակարգը շատ խիստ է և պահպանողական, և այս առումով շատ կարևոր է իմանալ, թե ինչ չի կարելի անել թագավորական ընտանիքի անդամների հետ շփման ժամանակ:

1.Չի կարելի առաջինը դիմել թագավորական ընտանիքի անդամին. պետք է սպասել, որ նա ինքը ձեզ դիմի առաջինը:

2. Չի կարելի նրան դիպչել:

3. Պետք է բարևել կարճ և թեթև ձեռքսեղմումով:

4. Թագուհու կամ թագավորի ներկայությամբ չի կարելի երկարաշունչ ելույթներ ունենալ:

5. Նրանց ներկայությամբ չի կարելի բարձրաձայն խոսել կամ գոռալ:
6. Կանայք թագուհուն պետք է բարևեն թեթև խոնարհումով:

Արարողակարգի կանոնների իմացությունը և դրանց անվերապահ կիրառումը պարտադիր է բոլոր դիվանագետների և երկրների կարևոր դերակատարների համար: Երկրների միջև լարվածության թուլացման համար բանականին կարևոր գործոն են դիվանագետների անձնական և մասնագիտական հատկանիշները: Հիշենք Նիքսոնի վարչակազմի օրոք ԱՄՆ պետքարտուղար Հենրի Քիսինջերին, որն իր բանակցային տաղանդի և բանիմացության շնորհիվ 1970-ականներին Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության միջև լարվածության թուլացման մեջ մեծ դերակատարություն ունեցավ: Նրա բանակցությունները խորհրդային առաջնորդների՝ մասնավորապես՝ Լեոնիդ Բրեժնևի հետ, հանգեցրին համաձայնությունների՝ զենքի վերահսկման և երկու գերտերությունների միջև հաղորդակցության ուղիների բացման վերաբերյալ:

Նվերների փոխանակում

Դիվանագիտական հանդիպումների ժամանակ առաջնորդների համար սովորական արարողակարգային երևույթ է խորհրդանշական նվերների փոխանակումը: Այդ նվերները պետք է ներկայացնեն տվյալ երկրի մշակույթն ու ավանդույթները կամ վերաբերեն այդ երկրների միջև առկա հարաբերություններին:

Կարող ենք ներկայացնել դիվանագիտական հանդիպումների ժամանակ առաջարկվող նվերների փոխանակման մի քանի օրինակներ: Քննարկենք դրանցից մի քանիսը: **Ավստրալիա** կատարած պաշտոնական այցի ժամանակ Ավստրալիայի վարչապետը կարող է իր արտասահմանցի գործընկերոջը նվիրել շոկոլադներով լի ուսապարկ կամ պայուսակ: Իտալիայի վարչապետը կարող է առաջարկել պիցցայի տեսքով հատուկ ժամացույց: **Ասիական երկրի** առաջնորդը կարող է իր գործընկերոջը նվիրել յոգայի գորգ՝ իր երկրի հայտնի հուշարձանները ներկայացնող նախշերով: Երկու **եվրոպական երկրների** հանդիպման ժամանակ առաջնորդներից մեկը կարող է մյուսին նվիրել իրենց երկրի հումորային կոմիքսների հավաքածու: Պատմականորեն լարված հարաբերություններ ունեցող երկրների առաջնորդներից մեկը կարող է մյուսին նվիրել քաղաքական բովանդակության հումորային սեղանի խաղ և այլն:

Կարելի է նաև նվիրել հնագույն գրքեր պատմական փաստաթղթեր կամ այդ փաստաթղթերի ֆաքսիմիլները:

Այժմ **Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների** օրնակով տեսնենք, թե արդյոք կան որոշակի կանոնակարգ օրենքներ նվերներ տալու և ստանալու վերաբերյալ, ինչպիսի նվերներ են փոխանակել այդ երկրների առաջնորդները և այլն:

Հայտնի է, որ Միացյալ նահանգները նվերների ընդունման առումով ամենաթափանցիկ երկիրն է: Այնտեղ ընդունված է գրանցել բոլոր նվերները՝ մանրամասն նկարագրելով այն, նշելով նրա արժեքը և նույնիսկ նշելով, թե ինչու պետք է այն ընդունել: Սովորաբար այդ հատվածում նշում է, որ մերժումը կարող է վիրավորել արտասահմանցի գործընկերոջը:

Ուսումնասիրելով 2002-ից 2015 թթ. արձանագրված «դիվանագիտական նվերների» ցուցակը, կարող ենք ասել, որ Հերմես նորաձևության տունը իր շարֆիկներով, պայուսակներով և ընդհանուր առմամբ 21 տեսակ ապրանքներով, Բակկարա ապրանքանիշն իր 12 անուն առարկաներով, Բեռնար Ռիշարի ժամացույցները և Ս.Տ Դյուպոն գրիչները վերջին տասնհինգ տարիների ընթացքում Ֆրանսիայի կողմից ԱՄՆ-ին նվիրած այսպես կոչված «ամենաարարողակարգային» նվերներն են:

Ի դեպ, նշենք, որ Հերմես նորաձևության տունը երկու անգամ անդրադարձել է հայկական թեմատիկային՝ թողարկելով **Հայկական այգիներ և Երևանյան տառեր վերնագրով** շարֆեր:

Քանի որ նվերը ինքնին շատ խոսուն է, շատ բան է ասում նվիրողի՝ տվյալ դեպքում նվիրող երկրի մասին, ուստի այն պետք է շատ բծախնդրորեն ընտրվի և ի ցույց դնի տվյալ երկրի կերպարը: Այս առումով Ֆրանսիայի համար բնորոշ հատկանիշներ կարող են լինել **դասականությունը և շքեղությունը:**

Դասականություն ասելով՝ նկատի ունենք այն, որ նվերը չպետք է շատ համարձակ և ժամանակակից լինի, օրինակ՝ մի նորահայտ հեղինակի կտավ, որի ստեղծագործությունները դեռևս ժամանակի քննությունը չեն անցել, և նրա իրական արժեքը դժվար կլինի գնահատել: Վաղը գուցե նրա կտավները որևէ արժեք չներկայացնեն, ուստի պետք է նվիրել արդեն իսկ գնահատած և իրենից որոշակի արժեք ներկայացնող արվեստի գործեր, իրեր կամ առարկաներ: Եվ, իհարկե, այդ նվերները պետք է լինեն **շքեղ,** քանի որ հասկանալի է, որ էժանագին նվերը կարող է վիրավորական համարվել:

Հետաքրքիր է նշել, որ Ֆրանսիայի հինգերորդ հանրապետության **«ամենաառատաձեռն»** նախագահը Սարկոզին է: Նա իր կնոջ հետ միասին ավելի քան 90,400 ԱՄՆ դոլար է ծախսել նվերների գնման վրա, որի գրեթե կեսը 2011 թ. տեղի ունեցած G20-ի գագաթնաժողովի առիթով: Նշենք Ֆրանսիական կողմի թանկարժեք նվերներից մի քանիսը:

2007 թ. նոյեմբերին Սարկոզին Բուշ ամուսնական զույգին նվիրեց **12.000 դոլար** արժողությամբ բրոնզե ձի՝ Դեգայի քանդակի կրկօրինակը, և բյուրեղապակյա գավաթ:

2008 թ.՝ նա նախագահ Բուշին նվիրեց **6200 դոլար** արժողությամբ Հերմես ապրանքանիշի թամբ:

2011 թ. Բարաք Օբամային նվիրեց Բակարա ապրանքանիշի՝ գոլֆ խաղացողներ պատկերող բյուրեղապակյա արձանիկներ, և 2 գոլֆի պայուսակ, որոնցից մեկն արժեր **7750 դոլար**:

Շատ հետաքրքրական են Ֆրանսիական իշխանությունների կողմից միջազգային գագաթնաժողովների ժամանակ պատվիրակության անդամների արած նվերները: **Կաննում տեղի ունեցած G20-ի գագաթնաժողովի** ժամանակ ամերիկացի նախագահին, ինչպես և մյուս բոլոր հյուրերին շնորհվեց **«G20»** մետաղադրամ Փարիզի դրամահատարանից, որը ամերիկյան ծառայությունների կողմից գնահատվում էր **200 եվրո:** Փաթեթը բաղկացած էր նաև Lancel պայուսակներից, երկու գրքից, հիգիենայի պայուսակից, BRM արծաթե ժամացույցից, երկու սպիտակ Dior խալաթներից, Duroc Danner շոկոլադից, Grasse օծանելիքից և այլն:

Դիվանագիտական նվերների ավանդույթը, որը գոյություն ուներ դեռևս հին Եգիպտոսում, առաջին անգամ դիտվել է որպես կոռուպցիոն երևույթ ամերիկյան ազգի հիմնադիր հայրերի կողմից: Բայց հայտնի է, որ Բենջամին Ֆրանկլինն ինքը չի կարողացել հրաժարվել 1785 թ. Լյուդովիկոս 16-րդի նվիրած հարյուրավոր ադամանդներով զարդարված ծխախոտատուփից: Նվերը մեծ անակնկալ էր նրա համար, սակայն նա չկարողացավ մերժել թագավորին :

Այնուհետև հիմնադիր հայրերը որոշեցին, որ նվերներն ընդունվելու համար դրանք պետք է վավերացվեն Կոնգրեսի կողմից: Որպես սկզբունք՝ Թոմաս Ջեֆերսոնն ընդունում էր գրքերը, իսկ մնացածն աճուրդի հանում, որոնց շահույթը նվիրաբերում էր ազգային գանձարանին:

Մյուս կողմից էլ կար նվերների մերժման դեպքում գործընկերներին վիրավորելու և միջազգային սկանդալների առաջացման հարցը: Ահա թե ինչու ի վերջո որոշվեց սահմանադրության մեջ փոփոխություն մտցնել, համաձայն որի՝ ամերիկացի բարձրաստիճան դիվանագետները կարող էին ընդունել իրենց արտասահմանցի գործընկերների նվերները՝ պայմանով, որ դրանք պետք է հաստատվեին Կոնգրեսի կողմից:

Նշենք, որ **1966 թ.-ից ի վեր** Կոնգրեսն այլևս չի հաստատում յուրաքանչյուր նվեր առանձին, և ամերիկացի քաղաքացիական ծառայողներն այժմ իրավունք ունեն ընդունելու **335 դոլարից պակաս** արժեք ունեցող նվերներ՝ առանց Կոնգրեսի հավանության:

Սակայն Ֆրանսիայի պարագայում չենք կարող խոսել նվերների ընդունման թափանցիկության մասին, ոչ թե այն պատճառով, որ նրանք քիչ նվերներ են ստանում, այլ այն պատճառով, որ նվերների հանրային ցուցակ գոյություն չունի: Թափանցիկությունն այս ոլորտում, որը առկա է բազմաթիվ երկրներում, ինչպիսիք Կանադան և նույնիսկ Մեծ Բրիտանիան են, երբեք հավանության չի արժանացել Ֆրանսիայի իշխանությունների կողմից:

Թեև Ֆրանսիայում նվերների ցանկ գոյություն չունի, բայց կան որոշակի կանոններ նվերների շնորհման և ընդունման մասին: Ըստ **2012 թ. մայիսին Ֆրանսուա Օլանդի** կողմից սահմանած էթիկայի կանոնագրքի՝ նախարարները «պարտավոր են Դոմենների ծառայությանը նվիրաբերել այն **150 եվրոյից բարձր գին** ունեցող նվերները՝ կա՛մ անմիջապես, կա՛մ իրենց գործառույթների ավարտին» (David Revault d'Allonnes):

Նվերների նկատմամբ ֆրանսիական իշխանությունների դրսևորած այս ուշադրությունը հավանաբար պայմանավորված էր Միշել Օբամայի անվան վերաբերյալ սկանդալով:

2009 թ. ապրիլին Ստրասբուրգում ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի ժամանակ Միշել Օբաման Կարլա Բրունի-Սարկոզիին նվիրեց Gibson ապրանքանիշի հիասքանչ ակուստիկ կիթառ: Մամուլում հրապարակումներ եղան այն մասին, որ Բարաք Օբամայի կինը խախտել է օրենքը և կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Ենթադրվում էր, որ նրա կողմից նվիրած գիթառը պատրաստված էր Մադագասկարից անօրինաբար ներկրված վարդափայտից:

Նշված օրինակները խոսում են այն մասին, թե դիվանագիտական վարվեցողության տեսակետից ինչքան կարևոր է նվերների ընդունման և շնորհման հարցը[1]:

Հումորի օգտագործումը դիվանագետների կողմից

«Հումորն արտակարգ երևույթ է: Նրա մի կայծը բավական է, որպեսզի խստությունը մեղմանա, բարկությունը և չարությունը անէանան, լույս ու ուրախություն իջնեն հոգուն»,- ասել է Մարկ Տվենը: Սակայն երկար ժամանակ ընդունված է եղել դիվանագետների համարել հումորի զգացումից զուրկ, ձանձրալի անձնավորություններ:

Նրանց մասին երբեմն բացասական կարծիքի են հայտնել նաև շատ մտավորականներ, օրինակ՝ Բալզակը և Գյոթեն, որոնք դիվանագետներին անվանում էին «տառակեր հիմարներ», իսկ ֆրանսիացի գրող Մարսել Պրուստը դիվանագետներին համարում էր «անձրևի չափ տաղտկալի» (Նավասարդյան …):

Սակայն հմուտ և բանիմաց դիվանագետներն իրենց գործունեության մեջ մշտապես օգտագործել են հումորը կամ ելույթներում հումորային շեղումներ են կատարել՝ մթնոլորտը ավելի ջերմ կամ մտերմիկ դարձնելու, հանրության վրա լավ տպավորություն թողնելու, ինչպես նաև նրանց համակրանքը շահելու նպատակով: Դիվանագետները կարող են իրենց խոսքում ներառել զվարճալի անեկդոտներ կամ նուրբ բառախաղեր, որոնք ապահովում են բարենպաստ մթնոլորտ բանակցությունների կամ մամլո ասուլիսների ժամանակ:

[1] Նվերների մասին տեղեկությունները վերցված են Tanguy de l'Espinay, le Parisien, interactif. Cadeaux présidentiels: la diplomatie du carré Hermès, 2016 և Fabrice, Bernay.*Tabatière, guitare, chêne… ces drôles de cadeaux que se font les présidents, L'édition du soir,* 2018 հոդվածներից:

Ահա դիվանագիտական ելույթներում հումորի կիրառման մի քանի օրինակներ:

ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Անանը սիրում էր իր ելույթներում հումոր օգտագործել. Իր ելույթներից մեկում նա ասում էր. «Դիվանագիտությունն այն է, որ կարողանաս այնպես ասել «գեղեցիկ էգ շուն», որ այն հնչի որպես հաճոյախոսություն»: (Nations Unies, 10 décembre, 2001):

Դասախոսության ժամանակ Գերմանիայի նախկին արտգործնախարար Յոշկա Ֆիշերը, կատակելով բազմակողմ դիվանագիտության դժվարությունների մասին՝ ասում է. «Դիվանագիտությունը նման է սիմֆոնիկ նվագախմբի: Ձեզ պետք է լավ դիրիժոր, բայց նաև պետք են երաժիշտներ, որոնք ներդաշնակ են նվագում: Եվ, իհարկե, միշտ կգտնվեն տղաներ, որոնք ֆլեյտայի փոխարեն սաքսոֆոն կնվագեն»: (CVCE. ue Berlin, 12 mai 2000):

ՄԱԿ-ում ելույթի ժամանակ ԱՄՆ նախկին դեսպան Սամանթա Փաուերը կանխարգելիչ դիվանագիտության կարևորությունը նշելու համար ասել է. «Կանխարգելիչ դիվանագիտությունը նման է ատամնաբույժի մոտ գնալուն: Բոլորը գիտեն, որ դա կարևոր է, բայց մեզնից քանի՞սն է դա անում կանոնավոր կերպով» (Nations Unies, CS/10392 22 septembre 2011):

Ինքնահեգնանք

Ինքնահեգնանքը հումորի դրսևորման տեխնիկա է, որը հաճախ դրական է գնահատվում հանրության կողմից: Դիվանագետները կարող են օգտագործել ինքնահեգնանքը՝ ցույց տալու համար իրենց մարդկային կողմը, որը կարող է նպաստել նրանց խոսքի անմիջականությանը: Օրինակ, որևէ տեխնիկական կամ բարդ խնդրի մասին խոսելիս դիվանագետը կարող է ժպտալով ասել. «Ես պետք է խոստովանեմ, որ ես այս թեմայի մասնագետը չեմ, բայց կարող եմ դիմել Google-ին՝ հասկանալու համար, թե ինչի մասին է խոսքը»:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում իր ելույթներից մեկի ժամանակ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը իր անգլերենի առոգանության մասին խոսելիս դիմեց ինքնահեգնանքի, ասելով՝ «Ես կխոսեմ անգլերեն, քանի որ դա թույլ կտա ինձ ավելի դանդաղ արտահայտվել և ցույց տալ, թե որքան «հմայիչ» է իմ անգլերեն առոգանությունը»:

Դիվանագիտության պատմությունը նաև լի է միջազգային հայտնի դերակատարների կողմից արված անհաջող ձևակերպումներով: Նշենք դրանցից մի քանիսը՝

«Կլիմայի փոփոխությունը կեղծիք է» - ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփ

«Կանայք պետք է ավելի քիչ վաստակեն, քան տղամարդիկ, քանի որ նրանք ավելի թույլ են, փոքր և պակաս խելացի» - Իտալիայի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնի

«Ժողովրդավարությունը գնացք է, որը մենք վարում ենք մինչև հասնենք մեր նպատակակետին: Իսկ երբ տեղ ենք հասնում, իջնում ենք գնացքից» - Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողան

«Եթե խոսքի ազատություն եք փնտրում, մի՛ եկեք Թուրքիա» - Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողան

Այսպիսի ձևակերպումները, որպես կանոն, շատ վատ տպավորություն են թողնում լսարանի վրա և արժանանում առաջադեմ հանրության քննադատությանը:

Ստորտային դիվանագիտություն

Երկրների միջև սպորտային միջոցառումների կազմակերպումը կարող է զվարճալի, բայց և արդյունավետ միջոց լինել դիվանագիտական հարաբերությունների ամրապնդման, երկրների միջև լարվածության թուլացման առումով: Հիշենք Սերժ Սարգսյանի և Նիկոլ Փաշինյանի կողմից **ֆուտբոլային դիվանագիտության**

օգտագործումը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար, որը, ցավոք, որևէ դրական արդյունք չունեցավ:

Կարող ենք բերենք սպորտային դիվանագիտության մի քանի օրինակներ՝ 2008-ի Օլիմպիական խաղերը Պեկինում, 2010-ի ՖԻՖԱ-ի աշխարհի գավաթը՝ Հարավային Աֆրիկայում, թենիսի Ուիմբլդոնի մրցաշար, 2019 թ. ռեգբիի՝ աշխարհի գավաթը Ճապոնիայում և այլն: Սակայն առանձնահատուկ էին 2018 թ. ձմեռային օլիմպիական խաղերը Փհենչհանում, որոնք նշանավորվեցին Հյուսիսային Կորեայի օլիմպիական թիմի մասնակցությամբ, ինչը ճանապարհ հարթեց Հյուսիսային Կորեայի և Հարավային Կորեայի միջև դիվանագիտական քննարկումների համար: Միջոցառումը գրավեց նաև միջազգային հանրության ուշադրությունը և հնարավորություն ստեղծեց ոչ պաշտոնական հանդիպումներ կազմակերպելու տարբեր երկրների ղեկավարների միջև:

Սրանք ընդամենը մի քանիսն են սպորտային բազմաթիվ իրադարձություններից, որոնք ունեն նաև դիվանագիտական նշանակություն: Սպորտային միջոցառումները հաճախ հարթակ են ստեղծում ազգերի միջև երկխոսության և համագործակցության համար և օգտագործվում են ընդունող երկրների կողմից՝ որպես իրենց միջազգային հարաբերությունների ամրապնդման հնարավորություն:

Սոցիալական ցանցերի օգտագործում

Դիվանագետները հաճախ արդյունավետ կերպով օգտագործում են սոցիալական ցանցերը՝ հանրության հետ շփվելու համար: Երբեմն նրանք նույնիսկ կիսվում են զվարճալի մեմերով կամ տեսանյութերով, որոնք օգնում են տարածելու դիվանագիտական հաղորդագրությունը թեթև և մատչելի ձևով:

Սոցիալական մեդիան կտրուկ փոխել է դիվանագետների հաղորդակցման և հասարակության հետ շփվելու ձևը: Ահա դիվանագետների կողմից սոցիալական ցանցերի օգտագործման մի քանի օրինակ.

«Այս մայիսի 28-ին՝ Առաջին հանրապետության 105-րդ տարեդարձին, մաղթում եմ Հայաստանին կարողանալ ապրել իր անկախությունը խաղաղության և բարգավաճման մեջ, մաղթում եմ Հայաստանին, ով իր պատմությունը չափում է հազարամյակներով, վստահություն ունենալ իր ապագայի նկատմամբ, մաղթում եմ Հայաստանին երբեք չկասկածել իր գեղեցկության, իր ուժերի և տաղանդների վրա, մաղթում եմ հայերին հպարտ լինեն այս երկիրը իրենց երեխաներին նվիրելու համար:

Եվ մաղթում եմ Ֆրանսիային միշտ սիրել Հայաստանը, ինչպես Հայաստանը սիրում է մեզ»:

Սա ՀՀ - ում Ֆրանսիայի նախկին արտակարգ և լիազոր դեսպան Ջոնաթան Լաքոտի հայերեն գրառումն է, որով նա շնորհավորում է հայ ժողովրդին Առաջին հանրապետության տարեդարձի առթիվ:

Ուսումնասիրելով Ջոնաթան Լաքոտի ֆեյսբուքյան գրառումները՝ մեր առջև կանգնում է հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, արվեստին ու գրականությանը քաջածանոթ ֆրանսիացի դիվանագետի կերպարը, որը մշտապես (երբեմն նույնիսկ հայատառ գրառումներով) արձագանքում է Հայաստանին և հայ ժողովրդի ճակատագրին անչվող բոլոր թեմաներին: Վաղուց արդեն չլինելով Ֆրասիայի դեսպանը Հայաստանում՝ Ջոնաթան Լաքոթը շարունակում է իր գրառումներում անդրադառնալ Հայաստանին վերաբերող իրադարձություններին: Հատկապես հուզիչ և, կարծում ենք, հարգանքի արժանի ժեստ էր հարգարժան դեսպանի կողմից 2023թ. ապրիլի 24-ին ծանոթների միջոցով իր անունից ծաղիկներ խոնարհելը հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողի առջև:

Անդրադառնանք ևս մեկ նախկին դեսպանի: Խոսքը Անրի Կյունի մասին է: Փայլուն կադրային դիանագետ լինելուց բացի, նա նաև գրող է. ունի բազմաթիվ ստեղծագործություններ, մի շարք գրական մրցանակների դափնեկիր է, ինչպես նաև

Ֆրանկոֆոնիայի Գրան պրի մրցանակի մրցանակակիր: Մշտապես անդրադանում է հայ ժողովրդի խնդիրներին: Ունի Հայաստանին և հայերի նվիրված ստեղծագործություններ, որոնցից են՝ ***Հայաստան՝ ժողովրդի հոգին, Մահը գոյություն չունի*** վեպը նվիրված Կոմիտասին, ***Հայաստանը քարաժայռի*** վրա հոդվածը և այլն:

«Հայաստանում գտնվելու տարիներին խորապես տպավորվելով Հայաստանի հազարամյա պատմությամբ ու մշակույթով՝ ես փորձեցի վերլուծել այն խոր աղբյուրները, որոնք կոչվում են ժողովրդի հիշողություն, լեզու, հավատ և արվեստ...Մի խոսքով, պատասխանել այն առեղծվածին, թե ինչպես կարող է պատահել, որ Նոյից հետո մինչ օրս դեռ գոյություն ունեն իրենց Նոյի հետնորդներ համարող հայերն ու Հայաստանը»- գրում է Անրի Կյունին:

Մեկ այլ մեջբերում նույն հեղինակից. «Հայ չեն ծնվում: Դու աստիճանաբար քեզ ընկալում ես այդպիսին, քանի որ սրտիդ խորքում շարունակում է ծաղկել Եդեմի հիշատակը մինչև վերջին շունչդ, ավելի վառ, քան մանկական սերերի կանաչ դրախտը: Հայկականությունը դուրս է արտաքինից: Եթե հայկականությունը միայն արյունով թելադրված լիներ, այն վաղուց արդեն արյամբ խորտակված կլիներ: Ինձ թվում է, որ հայկականությունն ավելի շուտ բանականության հազարամյա դրսևորումն է»:

Հասարակության հետ անմիջական շփում

Դիվանագետներն օգտագործում են սոցիալական մեդիան՝ ուղղակիորեն հասարակության հետ շփվելու, տեղեկատվության, թարմացումների և պաշտոնական հայտարարությունների փոխանակման համար: Սա նրանց թույլ է տալիս շրջանցելու ավանդական լրատվամիջոցները և ուղղակիորեն խոսելու քաղաքացիների հետ:

Դիվանագիտական իրադարձությունների ուղիղ հեռարձակում.

Դիվանագետներն օգտագործում են ուղիղ հեռարձակման հարթակներ, ինչպիսիք են Facebook Live-ը, Twitter Live-ը կամ Instagram Live-ը՝ դիվանագիտական իրադարձությունները տարածելու համար: Սա թույլ է տալիս հանրությանը հետևելու կարևոր գիտաժողովներին, բանակցություններին կամ ելույթներին, նույնիսկ եթե նրանք անձամբ չեն կարող դրանց մասնակցել:

Մշակութային դիվանագիտության խթանում

Երկրների վրա ազդեցություն կիրառելու առումով բավականին արդյունավետ միջոց է փափուկ ուժը: Օրինակ՝ ամերիկյան ազդեցությունը աշխարհում մեծապես պայմանավորված է նաև վերջինիս կողմից իրականացվող փափուկ ուժի արդյունավետ կիրառմամբ: Միացյալ Նահանգները զգալի ազդեցություն է գործում ամբողջ աշխարհում՝ իր զվարճանքի արդյունաբերության, հատկապես՝ Հոլիվուդի միջոցով: Ամերիկյան ֆիլմերը, երաժշտությունը և հեռուստատեսությունը հաճախ ծառայել են որպես արտերկրում ամերիկյան արժեքների և գաղափարների տարածման միջոց՝ օգնելով շատ երկրներում ձևավորել վերաբերմունք և կարծիք:

Բրիտանական հեռարձակման կորպորացիան (BBC) հաճախ դիտվում է որպես Միացյալ Թագավորության փափուկ ուժի արդյունավետ գործիք: Ամբողջ աշխարհում հեռարձակվող իր ռադիոյի և հեռուստատեսային հաղորդումների միջոցով BBC-ն նպաստում է բրիտանական մշակույթի, ժողովրդավարական արժեքների և խոսքի ազատության առաջմղմանն ամբողջ աշխարհում:

Դիվանագետներն օգտագործում են սոցիալական մեդիան՝ նաև մշակութային դիվանագիտությունը խթանելու համար՝ տարածելով իրենց երկրի մշակույթի, խոհանոցի, արվեստի և այլ բնագավառների մասին տեղեկատվություն: Սա նպաստում է ազգերի միջև կապերի ամրապնդմանն ու փոխըմբռնմանը:

Կապ օտարերկրյա քաղաքացիների հետ

Սոցիալական մեդիան օգտագործվում է նաև օտարերկրյա քաղաքացիների հետ անմիջականորեն շփվելու և դիվանագիտական հարցերի շուրջ քննարկումներում ներգրավվելու համար: Դիվանագետները կարող են պատասխանել քաղաքացիների հարցերին, հստակեցնել իրենց դիրքորոշը կամ լսել մարդկանց մտահոգությունները, ինչը նպաստում է բաց և թափանցիկ երկխոսությանը:

Ճգնաժամի կառավարում և հանրային դիվանագիտությունն օգնում է վերահսկելու պատմությունը և ազդելու միջազգային հասարակական կարծիքի վրա:

Մոնիտորինգի միտումները և հասարակական կարծիքը. դիվանագետներն օգտագործում են սոցիալական մեդիան, ինչպես նաև ձևավորվող քաղաքական և հասարակական միտումները և դիվանագիտական խնդիրների վերաբերյալ հանրային կարծիքը վերահսկելու համար: Սա թույլ է տալիս նրանց հասկանալու հանրության մտահոգություններն ու ակնկալիքները և համապատասխանաբար հարմարեցնել իրենց մոտեցումը այդ խնդիրների նկատմամբ:

Սոցիալական մեդիան կարող է լինել կարևոր գործիք դիվանագետների համար՝ թույլ տալով նրանց ավելի արդյունավետ հաղորդակցվել, հասնել ավելի լայն լսարանի և առաջ մղել իրենց նպատակները:

Ավանդական զգեստի կրում

Պաշտոնական միջոցառումների ժամանակ դիվանագետներին կարելի է խրախուսել, որպեսզի նրանք կրեն իրենց երկրի ավանդական զգեստները՝ այդպիսով հետաքրքիր բազմազանություն հաղորդելով միջոցառմանը: Սա նաև հնարավորություն կտա վեր հանելու յուրաքանչյուր ազգի մշակութային հարստությունը:

Ազգային խոհանոց

Պաշտոնական արարողությունների ժամանակ միջազգային ստանդարտ ուտեստներ մատուցելու փոխարեն դիվանագետները կարող են ընտրել իրենց հայրենի երկրի բնորոշ ուտեստները: Սա հնարավորություն կտա հյուրերին բացահայտելու նոր համեր և ավելին իմանալու ներկայացված յուրաքանչյուր երկրի խոհանոցի և մշակույթի մասին:

Գեղարվեստական ներկայացումներ

Դիվանագետները կարող են կազմակերպել գեղարվեստական ներկայացումներ դիվանագիտական միջոցառումներում՝ հյուրերին զվարճացնելու և իրենց երկրի մշակույթը նշելու համար: Սա կարող է ներառել ավանդական պարեր, մարտարվեստի ցուցադրություններ, ժողովրդական երաժշտության համերգներ կամ ազգային ֆիլմերի ցուցադրություններ:

Կարևոր միջոցառումների բացման արարողություններ

Դիվանագիտական համաժողովի կամ գագաթնաժողովի մեկնարկը նշելու համար դիվանագետները կարող են բացման յուրօրինակ արարողություն կազմակերպել: Օրինակ՝ Ֆրանկոֆոնիայի երկամյակի շրջանակներում Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատունը հրավիրում է ֆրանսիացի ատիստների՝ Ֆրանկոֆոնիայի երկամյակի միջոցառումների մեկնարկը տալու նպատակով:

Մշակութային այցելություններ

Դիվանագիտական հանդիպումների շրջանակում դիվանագետները կարող են կազմակերպել մշակութային այցելություններ օտարերկրյա պատվիրակությունների համար: Սա հնարավորություն կտա դիվանագետներին ցուցադրելու իրենց երկրի

պատմական, գեղարվեստական կամ ճարտարապետական վայրերը՝ այդպիսով այցելուների համար ապահովելով հարստացնող և հիշարժան փորձ:

Եզրակացություն

Ամփոփելով երկրների միջև լարվածության թուլացմանն ուղղված դիվանագիտական մեթոդների ու միջոցների վերլուծությունը՝ կարևոր է նշել, որ դրանց կիրառումը, մասնավորապես՝ հումորի օգտագործումը, պետք է համապատասխանի իրավիճակին և հարգալից լինի բոլոր մասնակիցների համար: Դիվանագետները պետք է տեղյակ լինեն իրենց լսարանի մշակութային, կրոնական և քաղաքական զգայունություն պարունակող թեմաներին, որպեսզի իրենց կողմից կիրառված հումորը և այլ մեթոդները վիրավորական կամ անպատշաճ չդիտվեն իրենց գործընկերների համար: Վերոնշյալ մեթոդները պետք է օգտագործվեն որպես լարվածության թուլացում առաջացնելու և դրական մթնոլորտ ստեղծելու միջոց՝ չխախտելով դիվանագիտական դիսկուրսի հիմնական նպատակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թերթ.am, «Գրկախառնություն արքայադստեր հետ, թիկնոց նախագահի կնոջ համար և այլ անհարմար իրավիճակներ, որոնցում հայտնվում են ղեկավարները (լուսանկարներ) », 12.12.14 https://www.tert.am/am/news/2014/12/12/rules/1534362
2. Նավասարդյան, Արման. «Հումորը՝ դիվանագետի օգնական», *ժողովուրդ*, հուն.13, 2013
3. Bensacq-Tixier, Nicole. *Histoire des diplomates et consuls français en Chine (1840-1912).*
4. Bernay, Fabrice. *L'Editoriale du soir. Tabatière, guitare, chêne… ces drôles de cadeaux que se font les présidents.* Lundi, le 23 avril, 2018. https://www.ouest-france.fr/leditiondusoir/2018-04-23/tabatiere-guitare-chene-ces-droles-de-cadeaux-que-se-font-les-presidents-6c240d61-3254-4f75-b13b-a3629f10a8ab
5. Cuny, Henry. *HUMEURS, L'Arménie sur la brèche.* Article, Esprit Surcouf, 2020. https://espritsurcouf.fr/humeurs-armenie-sur-la-breche_par-henry-cuny/
6. David Revault d'Allonnes, Une « charte de déontologie » pour les ministres, Le Monde, Publié le 17 mai 2012
7. Démoulin. Stéphanie, Psychologie de la négociation , Article dans MARDAGA , 8/03/2014https://www.editionsmardaga.com/products/psychologie-de-la-negociation
8. Discours de Joschka Fischer sur la finalité de l'intégration européenne (Berlin, 12 mai 2000) ; CVCE. ue
9. Fedele, Dante. *Naissance de la diplomatie moderne (XIIIe-XVIIe siècles). L'ambassadeur au croisement du droit, de l'éthique et de la politique*, Baden-Baden - Zürich/St. Gallen, Nomos - Dike Verlag, 2017.
10. Nations Unies, Le Conseil de sécurité souligne l'importance de la diplomatie préventive, thème principal du débat général de la soixante-sixième session de l'Assemblée ; À l'intention des organes d'information • Document non officiel ; CS/10392 22
11. Nations Unies, ELIMINER LA PAUVRETE, PREVENIR LES CONFLITS ET PROMOUVOIR LA DEMOCRATIE SONT LES TROIS PRIORITES DES NATIONS UNIES AU XXIe SIECLE DECLARE M. KOFI ANNAN LORS DE LA REMISE DU PRIX NOBEL DE LA PAIX, 10 décembre, 2001
12. Noé, Gandillot. *Le jour où… Nicolas Sarkozy et Carla Bruni furent reçus par Elizabeth II au château de Windsor.* TF1info | Reportage : Publié le 9 septembre 2022.

13. Pellitier, Benjamin, Maladresses, bourdes et autres impairs culturels des responsables ,Article dans Gestion des risaues interculturels, 5 mars, 2012 https://gestion-des-risques-interculturels.com/risques/maladresses-bourdes-et-autres-impairs-culturels-des-responsables-politiques/ septembre 2011

14. Roux, Martine. L'Actualité, Les 10 bourdes protocolaires de la décennie, 13 avril, 2018https://lactualite.com/politique/les-10-bourdes-protocolaires-de-la-decennie/

15. Witmeur, Renaud. La négociation en politique. Article, Dans Dossiers du CRISP 2015/2 (N° 85).

16. https://www.tf1info.fr/international/video-le-jour-ou-nicolas-sarkozy-et-carla-bruni-furent-recus-par-la-reine-elizabeth-ii-au-chateau-de-windsor-2231819.html

WORKS CITED

1. Navasardyan, Arman. «Humor@ divanageti ognakan» [Humor is the Diplomat's Assistant], Jorovurd, hunv. 13, 2013. (in Armenian)

2. Tert.am, «Grkakharnutyun arqayadster het, tiknots nakchagahi knoj hamar yev ajl anharmar iravijakner, vorontsum haytnvum en hgekavarner@ (lusankarner)» [A Hug with a Princess, a Cape for the President's Wife and other Embarassing Situations in which CEOs find themselves (photo)], Available: 12.12.14, https://www.tert.am/am/news/2014/12/12/rules/1534362 (in Armenian)

ANALYSIS OF DIPLOMATIC METHODS TO REDUCE TENSION BETWEEN COUNTRIES

VARDUHI PETROSYAN
Yerevan State University, Faculty of International Relations,
Department of Diplomatic Service and Communication,
Ph.D. in Philology, Associate Professor
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to highlight diplomatic methods the knowledge and application of which can significantly contribute to improving relations between countries and, in some cases, easing existing tensions. The article discusses the challenges diplomats face in achieving this goal, particularly in ensuring ongoing dialogue and fostering cooperation between nations.

For a diplomat, understanding cross-cultural characteristics is especially crucial. This understanding helps them avoid tactless or offensive expressions or actions and, when used skillfully, leverage cultural nuances to benefit negotiations.

The success of negotiations also hinges on a diplomat's personal qualities: personal charisma, pleasant demeanor, comprehensive mastery of the negotiation subject, profound expertise in global civilization and contemporary geopolitics, as well as proficiency in intercultural communication and related matters.

The article employs methods such as critical analysis of current trends in bilateral and multilateral diplomacy, as well as simultaneous and cross-temporal examination of the subject matter.

The primary conclusion drawn is that successful diplomatic endeavors require a blend of the aforementioned professional skills and essential personal qualities. Additionally, diplomats must effectively represent their country, both in private and public engagements.

Keywords: *de-escalation, humor and self-deprecation, court diplomacy, cultural diplomacy, kitchen diplomacy, etiquette and manners, ceremonial gift exchange.*

АНАЛИЗ ДИПЛОМАТИЧЕСКИХ МЕТОДОВ СНИЖЕНИЯ НАПРЯЖЕННОСТИ МЕЖДУ СТРАНАМИ

ВАРДУИ ПЕТРОСЯН
кафедра дипломатической службы и профессиональной коммуникации факультета международных отношений Ереванского государственного университета, кандидат филологических наук, доцент г. Ереван, Республика Армения

Цель статьи выделить дипломатические методы, знание и применение которых могут во многом способствовать улучшению отношений между странами, а в некоторых случаях и ослаблению существующей напряженности между странами. В статье обсуждаются задачи, стоящие перед дипломатами в достижении этой цели, а именно поиск путей обеспечения постоянного диалога и развития сотрудничества между странами. Для дипломата особенно важно знание межкультурных особенностей, позволяющее избегать бестактных или оскорбительных выражений или действий и при умелом использовании – применять их во благо переговоров.

Успех переговоров определяется также личными качествами дипломата: личной привлекательностью, приятным внешним видом и поведением, полным владением обсуждаемых им вопросом, глубокими профессиональными знаниями по темам мировой цивилизации и современной геополитики, а также особенностями межкультурного взаимодействия, общения и другими аспектами.

Для анализа темы были использованы методы критического анализа современных тенденций в двусторонней и многосторонней дипломатии, а также симультанного и кросс-временного исследования.

Основной вывод статьи заключается в том, что для достижения успеха в профессиональной деятельности и переговорах дипломату необходимо сочетать вышеперечисленные профессиональные навыки и важные личностные качества. Кроме того, он должен уметь наилучшим образом представлять свою страну как на частных, так и на публичных встречах.

Ключевые слова: *деэскалация, юмор и самоуничижение, придворная дипломатия, культурная дипломатия, кухонная дипломатия, этикет и манеры, церемониальный обмен подарками.*